ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<<30>> հունվարի 2012թ. N 23

ք. Արմավիր

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի <<բ>> ենթակետով, << Թափոնների մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.20-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2009 թվականի ապրիլի 6-ի թիվ 01/17/1928-09 հանձնարարականը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության 2012 թվականի աշխատանքային ծրագիրը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի տարածքում գտնվող մարզային նշանակության ճանապարհների սանիտարական վիճակը ստուգելու, մարզի տարածքում կենցաղային աղբի, արտադրական թափոնների հավաքման, տեղափոխման, տեղադրման, մթնոլորտի, ջրաղբյուրների մաքրության, պահպանման վերահսկման նպատակով.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին /Ա.Աղաբաբյան/՝սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներին մասնակից դարձնել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պետական հիգիենիկ հակահամաճարագային տեսչության Արմավիրի մարզային կենտրոնի համապատասխան մասնագետին /համաձայնությամբ/ և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համապատասխան համայնքների ղեկավարներին /համաձայնությամբ/:

3. Հանձնաժողովին /Ա.Աղաբաբյան/՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքների կատարման մասին երկշաբաթյա պարբերականությամբ զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը /պետ Վ.Մկրտչյան/՝սահմանված կարգով իրականցնել գործուղման ծախսերի վճարումը:
5. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2009 թվականի ապրիլի 22-ի <<Հանձնաժողով ստեղծելու մասին>> թիվ 42 կարգադրությունը:
6. Սույն կարգադրությունը ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ***Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ***

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
2012 թվականի ----------
թիվ ------- կարգադրության

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

Հանձնաժողովի նախագահ՝

Ա.Աղաբաբյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տեղակալ

Անդամներ՝

Ս.Բաղդասարյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության, բնապահպանության բաժնի պետ

Հ.Կուրղինյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետի տեղակալ

Ա.Պողոսյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության գլխավոր մասնագետ

Գ. Ղազարյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ

Հ.Էքիզյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության առաջատար մասնագետ

Վ. Միրզախանյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի Մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ

Կ. Մարգարյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության, բնապահպանության բաժնի առաջատար մասնագետ

Լ. Հարությունյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ

Ս. Խաչատրյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության հարցերի բաժնի գլխավոր մասնագետ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Փ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ